**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 144

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 06-033-0037-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վազգեն Ժուդեքսի Ղուբաթյանի դիմումը, <<Սարգիս Թամազյան Ռոբերտի>> Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունն ու տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ առկա է բնակելի տան կառուցման և սպասարկման համար սահմանազատված 0.0265 հա մակերեսով հողամաս, դրա վրա առկա է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության 50.10 քմ շինություն, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, նշված անշարժ գույքի նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և հողհատկացման հիմքերը, ղեկավարվելով ,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին, ՀՀ 50-Ն օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 37 հոդվածով `

Որոշում եմ.

1.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-0033-0037-0003 ծածկագրի տակ գտնվող 0.0265 հա բնակելի կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1992թ. կառուցված 50.10 քմ մակերեսով բնակելի քոթեջի նկատմամբ Վազգեն Ժուդեքսի Ղուբաթյանի /ծնված 1973թ./,Ինեսա Վազգենի Ղուբաթյանի / ծնված 2002թ./ , Դավիթ Վազգենի Ղուբաթյանի / ծնված 2009թ./ համատեղ սեփականության իրավունքը:
2.Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Ուժը կորցրած ճանաչել Դարպաս համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2021 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 140 որոշումը:
5.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 145

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշումը՝
Որոշում եմ.

1.Դարպաս համայնքի 06-033-0001-0008 ծածկագրի 0,134012 հա տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել 1 փողոց, 4 փոստային հասցեն:
2.Դիմել Կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը փոստային հասցեն գրանցելու:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**